ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ–ի 2 դասվարի (18 դասաժամ, 10 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ՝ 6 դասաժամ <<Բնություն>>, 2 դասաժամ <<Ֆիզիկա>>), պատմության (21 դասաժամ՝ 6 դասաժամ <<Իմ հայրենիքը>>, 4 դասաժամ՝ <<Իմ հայրենիքն ու աշխարհը>>, 6 դասաժամ՝ <<Հայոց պատմություն>>, 4 դասաժամ՝ <<Համաշխարհային պատմություն>>, 1 դասաժամ <<Հասարակագիտություն>>), անգլերենի (18 դասաժամ) և կենսաբանության (18 դասաժամ՝ 16 դասաժամ <<Բնություն>>, 2 դասաժամ <<Կենսաբանություն>>) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունե- րի ստուգումն անց կացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2)բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ, միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն՝ առկայության դեպքում,

5)ինքնակենսագրություն (Ձև 4),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկա-յացնում են նաև զինգրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9)որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ.

10)Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025թ-ի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին,Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Բյուրեղավան, Ս.Վարդանյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել (0222) 6-54-40 հեռախոսահամարով: